**Արձանագրություն N 3**

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-25/22 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

03. 10. 2025թ.
ժամը՝ 12:00

ք. Երևան, Բաղրամյան 19
Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Վ.Հարությունյան* |
| Նիստից բացակայում է | Վ.Հարությունյանը, Տ. Բադալյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Հայրապետյան, Ա. Մանուկյան, Տ. Ավետիսյան, Տ. Բադալյան* |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Հ.Թադևոսյան |

***1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիր/ ուսումնասիրման նպատակով հանձնաժողովի նիստը հետաձգելու վերաբերյալ***

Նիստը վերսկսվեց 03.10.2025թ. ժամը 12:00-ին կայացած նիստում Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրման նպատակով նիստը հետաձգել և հաջորդ նիստ հրավիրել 08.10.2025թ.-ի ժամը 12.30-ին:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

***2. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին***

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 08.10.2025թ. ժամը 12:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

***3. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտերի գնահատման մասին***

Նիստը վերսկսվեց 08.10.2025թ. ժամը 12:30-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «Մոնիկ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Մոնիկ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:*

***4. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման վերաբերյալ***

08.10.2025թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Մոնիկ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակից իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցների հայտերը մերժել:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0*

Հանձնաժողովի անդամներ՝

________________ Աշոտ Հայրապետյան

________________ Արմենակ Մանուկյան

________________ Տավրոս Ավետիսյան

________________ Հեղինե Թադևոսյան